

Դրամական միջոցների և պարտատոմսերի գրավով ապահովված

Չվերականգնվող սահմանաչափով վարկային քարտի տեղեկատվական ամփոփագիր

Թարմացվել է 11.07.2018թ.

Վարկը տրամադրվում է «Կոնվերս Բանկ» ՓԲԸ (այսուհետ՝ Բանկ) կողմից ֆիզիկական անձանց՝ բացառությամբ անհատ ձեռնարկատերերի (այսուհետ՝ Յանտորդ):

Վարկը տրամադրվում է Բանկի Գլխավոր գրասենյակի Յանտորդների սպասարկման գրասենյակում և մասնաճյուղերում Arca Classic քարտի միջոցով, որը հետագայում այլ նպատակների համար չի կարող օգտագործվել: Քարտերի տրամադրման և օգտագործման կանոնները ներկայացված են [կայքում](#):

Քարտի արժույթը	ԱՄՆ դոլար Եվրո
Քարտի պատրաստման և տրամադրման ժամկետը	2 - 4 աշխատանքային օր

Գրավի տեսակը

Ավանդային, ընթացիկ, ինսյուրական, ինչպես նաև առարկայագուրկ մետաղական հաշիվներին առկա միջոցներ, պետական կամ Բանկի կողմից թողարկված պարտատոմսեր

Որպես գրավ չեն կարող հանդես գալ հետևյալ հաշիվներում առկա դրամական միջոցները՝

- «Կուտակային կենսաթոշակային ավանդ» ավանդատեսակի հաշիվ,
- Պետական աջակցության հաշիվ,
- Սոցիալական փաթեթի հաշիվ,
- Ցպահանջ հաշիվ
- Այլ հատուկ հաշիվներ

Կանխիկացման վճար	0.3%
-------------------------	------

Վարկի ժամկետը

Վարկի և գրավի արժույթը նույնը լինելու դեպքում	Առավելագույնը 5 տարի
Վարկի և գրավի արժույթը տարբեր լինելու դեպքում	Առավելագույնը 1 տարի
Գրավը ժամկետային ավանդային հաշվին առկա դրամական միջոցներ, պետական կամ Բանկի կողմից թողարկված պարտատոմսեր լինելու դեպքում	Ոչ ավելի քան ժամկետային ավանդի պայմանագրի կամ պարտատոմսերի մարման վերջնաժամկետը
Գրավը ինսյուրական հաշվին կամ առարկայագուրկ մետաղական հաշվին միջոցներ լինելու դեպքում	Գրավի պայմանագրով սահմանված ժամկետը

Ամփոփագրում նշված պայմանները կարող են փոփոխվել:

Հավելյալ տեղեկատվության համար կարող եք այցելել Բանկի <https://www.conversebank.am> ինտերնետային կայք, Բանկի Գլխավոր գրասենյակի Յանտորդների սպասարկման գրասենյակ/ցանկացած մասնաճյուղ կամ զանգահարել հետևյալ հեռախոսահամարով՝ (+374 10) 511 211

Վարկ/գրավ հարաբերակցությունը	
Վարկի և գրավի արժույթները նույնը լինելու դեպքում	Մինչև 95%
Վարկի և գրավի արժույթը տարբեր լինելու դեպքում	Մինչև 80%
Կանխավճարված տոկոսներով ավանդային հաշիվների գրավադրման դեպքում	Վարկ/գրավ հարաբերակցության չափը սահմանվում է Բանկի կողմից
Գրավն առարկայազուրկ մետաղական հաշիվ լինելու դեպքում	
Պետական պարտատոմսերի գրավադրման դեպքում	Պարտատոմսերի գնահատումն իրակացվում է Բանկի կողմից

Վարկի տարեկան անվանական տոկոսադրույքը		
Վարկի արժույթ	Գրավի արժույթ	Վարկի տարեկան անվանական տոկոսադրույք
ԱՄՆ դոլար	ՀՀ դրամ	Տվյալ պահին գործող ԱՄՆ դոլարի ԿԲՀՏ* + 3%
ԱՄՆ դոլար	ԱՄՆ դոլար	Միջոցների նկատմամբ հաշվարկվող տոկոսադրույք + 3% կամ արժեկտրոնային տոկոսադրույք + 3%
ԱՄՆ դոլար	Եվրո	Տվյալ պահին գործող ԱՄՆ դոլարի ԿԲՀՏ* + 4%
Եվրո	ՀՀ դրամ	Տվյալ պահին գործող Եվրոյի ԿԲՀՏ* + 3%
Եվրո	ԱՄՆ դոլար	Տվյալ պահին գործող Եվրոյի ԿԲՀՏ* + 3%
Եվրո	Եվրո	Միջոցների նկատմամբ հաշվարկվող տոկոսադրույք + 3% կամ արժեկտրոնային տոկոսադրույք + 3%
ԱՄՆ դոլար	Առարկայազուրկ մետաղական հաշիվի գրավադրման դեպքում	15%
Եվրո		13%

*ԿԲՀՏ – «Կոնվերս Բանկ» ՓԲԸ հաշվարկային տոկոսադրույք, որը կարող է փոփոխվել յուրաքանչյուր ամիսը մեկ անգամ: Ընդ որում՝ գործող վարկերի դեպքում փոփոխված ԿԲՀՏ-ն ուժի մեջ է մտնում ԿԲՀՏ-ի հաստատման ամսվան հաջորդող երկրորդ ամսվա 1-ից: ԿԲՀՏ-ի մասին կարող եք տեղեկանալ www.conversebank.am կայքից և Բանկում տեղադրված ցուցանակներից/սպասարկման սրահի Էկրաններից:

Վարկի տարեկան անվանական տոկոսադրույքը պետական պարտատոմսերի գրավադրման դեպքում	ԱՄՆ դոլար՝ 9% Եվրո՝ 8%
---	---------------------------

Վարկի մայր գումարի և տոկոսագումարների մարման կարգ

Մինչև 2 տարի ժամկետով վարկերի համար	Տոկոսագումարները՝ ամսական կամ վարկի ժամկետի վերջում Մայր գումարը՝ վարկի գործողության ընթացքում առանձին մասերով կամ ամբողջությամբ
2 տարուց ավելի ժամկետով վարկերի համար	Տոկոսագումարները՝ ամսական Մայր գումարը՝ վարկի գործողության ընթացքում առանձին մասերով կամ ամբողջությամբ

Տոկոսագումարների հաշվարկման օրինակ

Վարկի տոկոսագումարները հաշվարկվում են անվանական տոկոսադրույքի հիման վրա:
Տոկոսադրույքը կիրառվում է նվազող մնացորդի նկատմամբ:

Հետևյալ պայմաններով վարկի դեպքում՝

Վարկի գումար	10 000 ԱՄՆ դոլար
Անվանական տոկոսադրույք	15%
Մարման ժամկետ	3 տարի
Մարման տեսակ	Անուիտետային

Տոկոսագումարները կկազմեն՝

Ամսական մարում (մայր գումար + տոկոսագումար)	346.65
Ընդհանուր տոկոսագումար	2 479.52
Մարումների հանրագումար	12 479.52

Տույժեր և տուգանքներ

Պայմանագրով նախատեսված մարման ժամկետների խախտում թույլ տալու դեպքում Վարկառուն Բանկին վճարում է տույժ՝ 0.13% ուշացման յուրաքանչյուր օրվա համար:

Վարկի վաղաժամկետ մարման դեպքում տույժեր և տուգանքներ սահմանված չեն:

Ուշադրություն

Արտարժույթի փոխարժեքի փոփոխությունները կարող են ազդեցություն ունենալ վարկի մարումների վրա:
Վարկի անվանական տոկոսադրույքը կարող է փոփոխվել Բանկի կողմից:

Հաճախորդի կողմից տոկոսագումարների և վարկի գումարների մարումները ժամանակին չկատարելու դեպքում այդ մասին տեղեկատվությունը կտրամադրվի ՀՀ Կենտրոնական բանկի վարկային ռեգիստր և «ԱԶՌԱ Զրեդիտ Ռեփորթինգ» ՓԲԸ-ին: Վատ վարկային պատմություն ունենալը հետագայում խոչընդոտում է օգտվել Բանկի կողմից տրամադրվող ֆինանսական գործիքներից:

Վարկային պարտավորությունները պայմանագրով սահմանված կարգով չկատարելու դեպքում Բանկն իրավունք ունի առանց դատարան դիմելու բռնագանձել և իրացնել գրավադրված գույքը և գրավի առարկայի իրացումից ստացված միջոցների հաշվին մարել Հաճախորդի վարկային պարտավորությունները:

Հաճախորդի վարկային պարտավորությունները մարելու համար գրավի իրացումից ստացված գումարը բավարար չլինելու դեպքում պարտավորությունները կարող են մարվել Հաճախորդի այլ գույքի հաշվին՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը

1	Դրամական միջոցների / պարտատոմսերի գրավադրմամբ ֆինանսավորման տրամադրման հայտ
2	Անձը հաստատող փաստաթուղթ, Հանրային ծառայությունների համարանիշ կամ բնակչության պետական ռեգիստր վարող մարմնի կողմից տրամադրված տեղեկանք ՀԾՀ չստանալու վերաբերյալ (չի պահանջվում, եթե ներկայացվում է նույնականացման քարտ)

Վարկը տրամադրելու դրական որոշման և մերժման գործունեները

Բանկը հակված է տրամադրել վարկը, եթե՝

- Վարկառուն համապատասխանում է տվյալ վարկի տրամադրման պայմաններին և առկա չեն սահմանափակող հանգամանքներ:
- Վարկառուն բանկի պահանջով իր վարկային պարտավորությունը ապահովում է գրավով

Վարկառուի՝ վերոնշյալ պայմաններից ցանկացածին չհամապատասխանելը կարող է հանգեցնել վարկի տրամադրման մերժմանը:

Վարկի տրամադրման վերաբերյալ որոշման մասին տեղեկացնելու ժամկետները

Որոշման կայացումը տևում է 1 բանկային օր, Հաճախորդը տեղեկացվում է մեկօրյա ժամկետում:

Ծանուցում Ֆինանսական համակարգի հաշտարարի վերաբերյալ

Տեղեկացնում ենք, որ «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ «Կոնվերս Բանկե ՓԲԸ կողմից Ձեզ մատուցվող ծառայությունների հետ կապված տասը միլիոն ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթով գումարը չգերազանցող գույքային պահանջի դեպքում ծագած վեճերն ու տարաձայնությունները կարող են լուծվել Ֆինանսական համակարգի հաշտարարի միջոցով:

Բանկի և Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակի միջև կնքված համաձայնագրի համաձայն՝ Բանկը հրաժարվում է Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից միայն այն գույքային պահանջների մասով, որոնց չափը չի գերազանցում 250,000 (երկու հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը, իսկ գործարքի գումարի չափը չի գերազանցում 500,000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը:

**Հասցե՝ 0010 ք. Երևան, Մ. Խորենացու փող. 15, «Էլիտ Պլազա» բիզնես կենտրոն 7-րդ հարկ
 Էլ. փոստ՝ info@fsm.am
 Հեռախոս՝ (+37460) 70-11-11
 Ֆաքս՝ (+37410) 58-24-21**